վում են Գետափուն, բայց այդ կարծիքը չունի հիմն, այլ է մի պարզական շողոքորթութիւն. Այլոց անհիմն կարծիքների հետ և ես կարող եմ յայտնել իմ փոքրիշատէ հիմնաւոր կարծիք: Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանը յիշում է Գառնոյ ձորի մէջ Գոփուղվան անունը *): Ո՞վ գիտէ, գուցէ այս գիւղի և եկեղեցու անունը եղել է Գոտողվան, որ տեղական թուրքերը աշխատել են աղճատել:

Կոդուղվանքից այն կողմն, ինչպէս յիշեցի, բարձրանում են անընակ լեռնային գօտիներ, ուր Ղարաբաղի վրանաբնակները պահում են ամառն իւրեանց անասունները: Լեռներից այն կողմն սկսւում է Նոր Բայազէթ և մասամբ Զանգեզուր գաւառների սահմանները, որոնք իմ նկատողութիւնից դուրս են: Սորանով վերջանում է իմ ճանապարհորդութիւնս Ալագեազի կամ Հաջիսամլուի ձորում, որտեղից կրկին իջնում եմ Արփաչայի ափերը, դէպի Քեշիշքեանդ գիւղը:

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ.

ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 8 ին Սուրբ Էջմիածնում հանդիսաւոր կերպով, ըստ սովորականին, կատարուեցաւ Նորին Օծութեան, Վեհափառ Մակար Կաթողիկոսի անուանակոչութեան տօնը:

Նոյն օր երեկոյեան Վեհարան հրաւիրուեցան ընթրիքի Սինոդի անդամ Սրբազան հարք և միաբանութեան մի քանի անդամք: Ընթրիքի ժամանակ և յետոյ երգեցիկ խումբը, դաշնակի ձայնակցութեամբ, երգեցին զանազան հոգևոր և ազգային երգեր, ղեկավարութեամբ երգեցողութեան ուսուցիչ հայր Ղևոնդ վարդապետի: Երգեցողութիւնն այնքան ներդաշնակ և գրաւիչ էր, որ երկու դասապետ ուսանողք երրորդ լսարանի Գէորգ Ջէօրբէջեանց և Գէորգ Ահարոնեան արժանացան Նորին Օծու-

(*) Օրբ. պատմ. Հ. Ա. գլ. ԽԲ. երես 274.

թիւնից ստանալու իբրև պարգև մի մի արծաթեայ ժամացոյց իրանց շղթայով։

Ամսոյս 18ին կիրակի, Նորին Օծութեան կարգադրութեամբ Իջման սուրբ սեղանի առաջ, ներկայութեամբ Վեհափառ Հայրապետի և բոլոր միաբանութեան կատարուեցաւ հոգեհանդիստ ի վրկութիւն հոգւոյ հանգուցեալ Կոմս Միքայէլ Դարիէլեան Լուսու-Մելիքեանի։

Նկեղեցին լի էր բազմութեամբ պաշտօնատար անձանց և հասարակ ժողովրդեան։ Հոգեհանգստի վերջում Նորին Օծութիւն ազգու կերպով մաղթեց հանգուցելոյ մեղաց թողութիւն և հոգւոյն հանգիստ և սուրբ հոգւոյ շնորհն խնդրեց—հանգուցելոյ վշտալի մօր, ամուսնոյ և զաւակաց համար, որ համբերութեամբ և խոնարհութեամբ տանեն այդ ծանր կորստեան ու մխիթարուին Աստուծոյ ողորմութեամբ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Յ2ն Նոյեմ. Սինօդն Ս. Էջմիածնի հիմնուելով Տփխիսու Կոնսիստոր. յայտարարութեան վերայ՝ որ ի 25 Հոկտեմ. համար 3126. թոյլատրեց իշխանուհի Եկատերինէին Լօրու Մելիքեանց իւր ծախքով կառուցանել ճոճկան գիւղում եկեղեցի, ներքին գործոց Նախարարութեան կողմից հաստատած մակարդակին համաձայն։

—

Յ30ն Նոյեմ. Սինօդն Ս. Էջմիածնի հիմնուելով Ղարաբաղու առաջնորդ Գեր. Կարապետ Եպիսկոպոսի միջնորդական յայտարարութեան վերայ՝ որ ի 28 օգոստ համար 116 թոյլատրեց Դանիէլ քահանային Տէր Գրիգորեանց շարունակել իւր քահանայագործութիւնը՝ Հուշուայ՝ վերին թաղի Ս. Յովհաննէս եկեղեցում,

---